

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԳՈՒՄԳԱԲԸ - ՍՏԱՆԳՈՒԼ



ARMENIAN PATRIARCHATE
TR - 34480 KUMKAPI - ISTANBUL
Tel. : (90-1) 517 0970 or 71
Fax : (90-1) 516 4833

ԶԵԿՈՅՑ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Կրօնական Ժողովը այս առաւօտ ժամը 08.30-ին գումարուեցաւ Պատրիարքարանի մէջ մախագահութեամբ Պատրիարքական Լիագօր Ընդհանուր Փոխանորդ՝ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանի:

Նորին Սրբազնութեան հրաւերով արտահերթ ժողովին մասնակից դարձան նաեւ Աթոռոյս Միաբան Հայր Սուրբերը, ներկայ քահանայ հայրերը, Պատրիարքական Աթոռոյ խորհրդականները, Սուրբ Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ Թաղային Խորհուրդի անդամները, համայնքային հինգ հաստատութեանց առեւտրայեանները եւ մամլոյ սպասարարները:

1. Նախ քան օրակարգի անցնիլը, Նախագահ Սրբազան Հայրը հոգեւոր արտասանեց Երանաշնորհ Գարեգին Բ Շնորհազարդ Պատրիարքի հոգւոյն ի համզիստ:

2. Կրօնական Ժողովը խոր ցաւով լսեց Հոգեւոյս Պատրիարքի վախճանման պարագաները:

3. Վաւերացուեցաւ Հանգուցեալ Գարեգին Բ Պատրիարքի Օծման եւ Յուդարկաւորութեան Կարգադիր Յանձնախումբը, մախագահութեամբ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի, որ պիտի ընէ այս առթիւ ըլլալիք ամէն պատշաճ կարգադրութիւն արժանաւայել կերպով:

4. Որոշուեցաւ վերջին օծման կարգն ու յուդարկաւորութիւնը կատարել 15 Մարտ 1998 Կիրակի առաւօտ ի ժամ Ս. Պատարագի:

Յաւելեալ տեղեկութիւններ կը ղեկուցուին Պատրիարքական Աթոռոյ Դիւանին կողմէ:

Լուսաւորեցէ Տէր զիոգի Երանաշնորհ Գարեգին Բ Պատրիարքի եւ անսասան պահեցէ զԵկեղեցի իւր:

ԴԻՒԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ա - 18 / 268